№ 35 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 26 **1892** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 26 № 35

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀՐԴԵՀԻՑ ԿԱՑՔԵՐԸ ՓՈԽԱԴԱՐԾ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ տեղեկացնում է ընկերութեան պ.պ. անդամների ընդհանուր գիտութեանը, որ երեքշաբթի, մարտի 31-ին, երեկոյեան 8 ժամին, Թիֆլիսի քաղաքային Դումայի դահլիճում նշանակված է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

քննելու և հաստատելու

1) Վարչութեան հաշիւը 1891 թուի համար։
2) Վարչութեան ծախսերի նախահաշիւները 1892 թուի համար։
3) Վարչութեան առաջարկութիւնները Թիֆլիսի քաղաքային վարչութեանը վերադարձնելու 369 ր. 35 կ., որ ստացված է քաղաքային տունը ապահովագրելու համար։
4) Վարչութեան առաջարկութիւնը՝ թոյլ տալ հաշուել ապահովագրական դումարի մէջ մինչև յունվարի 1-ը 1895 թուի, սկզբնական $^1/_4$% վճարը։
5) և նոյնպէս ընտրութիւնները կատարելու համար. վարչութեան մէկ անդամի, հերթով դուրս եկող Մ. Բ. Բէժանովի փոխարէն և վարչութեան անդամների երեք կանդիդատների, վերատուզող յանձնաժողովի երկու անդամների և նրանց մէկ-մէկ կանդիդատի։

Ընկերութեան անդամները, որոնք միջոց չունեն մասնակցել ընդհանուր ժողովին, կարող են յանձնել իրանց ձայնի իրաւունքը ուրիշ անձին, հաւատարմագրով, որի վրա եղած ստորագրութիւնը պէտք է վաւերացրած լինի վարչութեան կողմից, կամ սովորական կարգով։ Մի և նոյն կայքի անբաժան տէրերը, նոյնպէս և արքունական կամ հասարակական հաստատութիւնները իրաւունք ունեն մասնակցել ընդհանուր ժողովին իրանց ներկայացուցիչների միջոցով։

Հաւատարմագրերը պէտք է ներկայացրած լինեն վարչութեանը ոչ աւելի ուշ քան ընդհանուր ժողովի նախընթաց օրը, ժամը 12-ին (կէսօրին)։

Մուտքը դահլիճի մէջ՝ վէլիամինովսկայա փողոցից է։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խորէն պատրիարքի կաթողիկոսացումն. Գրականութիւն ցեխոտողներ. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ամերիկացիների մարդասիրութիւնը. Թուրքիա. Պոստային միջազգային դաշնադրութիւն. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. Գրիգորիս եպիսկոպոս Ալէքսիանեան.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՐԷՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑՈՒՆ

—

«Արձագանքի» անցած կիրակվայ № 35-ում, նրա Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, թէ ինքը կարողացել է իմանալ, թէ ո՞վ է Խորէն ամենապատիւ պատրիարքի կաթողիկոսացումն։

Նորին ամենապատուութիւնը գոհացում տալով պ. Թղթակցի հետաքրքրութեանը, բարեհաճել է մասնաւոր լինել Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեանի վրա՝ ասելով—«Նա հայ եկեղեցական է բառիս բուն նշանակութեամբ. լաւ ուսումնասիրած է մեր եկեղեցին, խոհուն և հաստատամիտ է»։ Այս յանձնարարականից յետոյ Նորին ամենապատուութիւնը չէ մոռացել պատշաճաւոր զգուշութեամբ ցոյց տալ մեղալի միւս երեսն էլ. ուստի մի թէև-ով շուռ տալով մեդալը, աւելացրել է—«Նա այդ հաստատամտութիւնը երբեմն այնպիսի ծայրայեղութեան կը հասցնէ, որ փոխանակ արդիւնքի, ընդհակառակն, վնասաբեր հետևանք կը ստացուի»։

Այս ազդարարութիւնը Նորին ամենապատուութեան կողմից անշուշտ մտածելու և զգուշանալու նիւթ կը տայ ս. Էջմիածնի համագումարի ժողովականներին։ Ի նկատի ունենալով, որ սրբազան պատրիարքը այսպիսի մի ծանրակշիռ խնդրի վերաբերմամբ, որպիսի է կաթողիկոսական ինդիրը, այնպէս թեթև սրտով ցոյց չէր տայ մեղալի շրջուն երեսը, եթէ նա երկիւղ չը կրէր, որ մի դուցէ ընտրողները ս. Էջմիածնում, իր գովեստը միայն կարդացած լինելով գերապատիւ Իզմիրլեանի մասին, սխալմունք անեն ընտրութեան գործում։

Բայց և այնպէս «Թուրքիոյ եպիսկոպոսներու մէջ», պատրիարք հօր կարծիքով, Իզմիրլեանը յարմարագոյն կաթողիկոսացուն է։

Իսկ—վերջացնում է նա իր խօսքը պ. Թղթակցի հետ—Սուրէնեան եպիսկոպոսը իմ տեսած Ռուսիոյ բոլոր հայ եկեղեցականութեան մէջ ամենէ պարկեշտ, եկեղեցական պատուին նախանձախնդիր եկեղեցականն է։

Այդպէս ուրեմն, պ. Թղթակցի հաղորդածի իմաստով, պատրիարքի համակրութիւնն ու ձայնը Իզմիրլեան և Սուրէնեան գերապատիւների կողմն են։

Ռուսաստանի եպիսկոպոսի նկատմամբ, Նորին ամենապատուութիւնը «Արձագանքի» խմբագրութիւնից տարբեր է մտածում։ Այս խմբագրութիւնն այս անգամ անպատճառ Թուրքիայի եպիսկոպոսներից է ուզում կաթողիկոս. շարժառիթը թէև շատ գաղափարական է այսպիսի դրական մարդիկների համար, բայց վերջապէս այս անգամ այսպէս է սրանց ցանկութիւնը։ Ուրեմն պատրիարք հօր ցուցումը գերապատիւ Սուրէնեանի վերաբերմամբ «Արձագանքի» և սրան հոգեկից թերթի խմբագրութիւնների կողմից, եթէ սրանց մինչև այսօր պնդածին հաւատայ մէկը, ընդունելութիւն չի գտնի։

Ցանկալի է ուրեմն, որ Նորին ամենապատուութիւնը «Թուրքիոյ եպիսկոպոսներու մէջ» ցոյց տայ դարձեալ մէկին, որ եկեղեցական լաւ յատկութիւնների հետ հմուտ լինի «վարչական հնարագիտութիւններուն», մի յատկութիւն, որ Նորին ամենապատուութիւնը անհրաժեշտ է համարում կաթողիկոսացուի համար։ Եթէ այդ յատկութիւնից զուրկ չը լիներ, պատրիարք հօր ասելով, Խրիմեան սրբազան, «որ սրտով ու զգացումով ազնիւ սիրելի է» իրան, նա ևս կը լինէր կաթողիկոսացու։

Արմաշի և Կ. Պոլսի խռովութիւնների միջից անցած և փորձված ս. հայրը անշուշտ լաւ է հասկանում թէ ինչ ասել է վարչական հնարագիտութիւնը, միայն նա այդ յատկութիւնը Սուրէնեան եպիսկոպոսի անձի մէջ տեսած լինելը չէ յայտնում, և չէր էլ կարող տեսած լինել, քանի որ ս. Էջմիածնում իր հիւր եղած ժամանակ Սուրէնեան սրբազանը դեռ վարչական ասպարէզը մտած չէր։ Վերջապէս Նորին սրբազնութիւնը դեռ մինչև օրս էլ մի այդպիսի յատկութիւն երևան չէ հանել, գուցէ առիթը ներկայացած չը լինելով։

Գալով Իզմիրլեան սրբազանին, Նորին ամենապատուութեան դատաստանով, այդ եկեղեցականի յատկութիւնը հաստատամտութիւնն է, բայց երբեմն ծայրայեղ հաստատամտութիւն, որը վնասաբեր հետևանքի կը հասցնէ։ Ուրեմն կարելի կը լինի ասել, թէ վարչական հնարագիտութիւնը այս անձի մէջ էլ կաղում է։

Մի ծայրայեղ հաստատամտութիւն, որից «փոխանակ արդիւնքի ընդհակառակն վնասաբեր հետևանք կը ստացվի», սահմանով աւելի մօտիկ պէտք է լինի յամառութեան կամ կամակորութեան, որոնցով արդարև կառավարել կարելի չէ։

Բարեխառն հաստատամտութիւնը Նորին ամենապատուութեան ցանկութեանն ու դիտաւորութեանն անշուշտ աւելի մերձ է. ուստի ցանկալի է, որ այդ բնաւորանիշով մի անձի վրա նա մատանիշ լինի։ Ցաճկահայ եպիսկոպոսները շատ են, գտնելը գուցէ դժուար չը լինի։

Ա. Մ. Եղեկեան

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՑԵԽՈՏՈՂՆԵՐ

—

Մեր գրականութեան ասպարէզի մէջ ամեն տեսակ մարդ ոտք է դրել։ Եւ այդ աւելի աչքի է ընկնում պարբերական մի երկու հրատարակութիւնների մէջ։ Ամեն ոք այժմ լրագրի աշխատակից է։ Անձնաւորութիւններ, որոնք զուրկ են զարգացումից, զուրկ են մի որ և է ուղղութիւնից, գրիչ են վերցնում ձեռքները և թերթի աշխատակից են դառնում։

Այդ փաստ է։ Եւ այդպիսիներին դուք շատ կը տեսնէք գաւառական քաղաքներում։

Ցեսնում էք մէկը խառնվեց մի որ և է հասարակական հարցի մէջ. նա սկսում է խօսել այնպիսի բաներ, որոնց մասին ինքը իսկի գաղափար էլ չունի։ Խօսում է գրականութեան մասին, չիմանալով, թէ ինչ բան է գրականութիւնը։ Շոշափում է այս, այն գրականական գործիչի պատիւը, ուսումնասիրած չը լինելով ոչ նրա բնաւորութիւնը, ոչ էլ նրա գործունէութիւնը։ Եւ այդ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԼԷԱԹՃԵԱՆ

(Իմ յիշողութիւններից)

—

1887 թուի, կարծեմ, յունվար ամիսն էր, որ Մուշի այն ժամանակվայ առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը մուտ գործեց Վան քաղաքը։ Նա նշանակվել էր Վասպուրականի «պատրիարքական փոխանորդ», այսինքն պատրիարքից ժամանակաւորապէս նշանակված, և ոչ թէ ժողովրդից ընտրված մի առաջնորդ։ Դա էր վանեցիների վաղուց լսած «Թուչնիկը։» Այդ մականունով է աւելի յայտնի Ալէքթճեան սրբազանը Ցաճկաստանի բոլոր գաւառներում սկսած այն օրից, երբ նա, իր աղատամիտ «Թուչնիկ» լրագրի խափանվելուց յետոյ, թողեց Կ. Պոլիսը և բոյն դրեց Հայաստանի խորքերում։

Ես տեսայ նրան մի երեք օրից յետոյ, երբ նա այցելեց այն եկեղեցին, որը մեր թաղումն էր գրանվում։ Ո՛րքան ազդու տպաւորիչ էր նա, Աստուած իմ, իր ամբողջ էութեամբ։ Նրա երկար ու ձիգ հասակի, և խելք, վառվռուն ու խիստ կենդանի աչքերի մէջ կար մի անսովոր, եռանդոտ արտայայտութիւն։

Նա քարոզեց և Նորաշէնի եկեղեցին թնդաց նրա զիլ, վերին աստիճանի առողջ և հուժկու ձայնից, նրա պարզ և հասարձակ առոգանութիւնից։ Եւ նրա քարոզը զարդարված էր «Թուչնիկի» խմբագրին՝ վայել ազատ ու լուսաւոր մտքերով, օգտակար և բեղմնաւոր գործունէութեան յոյսերով։

Վան եկած-չեկած, նա պարզեց իր դրօշակը, ջերմ ապօղոսեան (իրիմեանական) իրան յայտնելով։ Երիտասարդների ուրախութեանը չափ ու սահման չը կար։ Առաջադէմ կուսակցութիւնը մի նոր շունչ առաւ և ոյժերը կրկնապատկեց։

Ես հեռացայ Վանից նոյն թուի օգոստոս ամսին, այսինքն նրա գալուց մօտ 6 ամիս յետոյ։ Պարզ է, որ ես բաղդ չունեցայ տեսնել սրբազանի ծրագիրների և նախնական պատրաստութիւնների պտուղները։ Բայց ցաւալին այն է, որ շատ բան չը տեսան ինձ հետ միասին նաև վանեցիք, որովհետև իմ հեռանալուց հաղիւ մի քանի ամիս անցած՝ Ալէքթճեան եպիսկոպոսը, կառավարութեան հրամանով, սուլթանների մայրաքաղաքը կանչվեց։ Եւ նա մինչև օրս էլ պահվում է այնտեղ՝ ուրիշ շատ եպիսկոպոսների հետ...

Բայց և այնպէս, իր այդ կարճատև պաշտօնավարութեան միջոցին, և նոյն իսկ իմ օրով, նա ցոյց տուեց թէ իր վարչական հմտութիւնը և թէ իր գործունեայ ու չինող ոգին։ Նա ընտրել տուեց կամ լրացրեց, մէկը միւսի ետևից, գաւառական (քաղաքական, կրօնական, կրթական, դատաստանական և այլն) քայքայված ու կազմալուծված ժողովները, վերաքննեց ու լուծեց առաջնորդարանում դիզված բազմաթիւ ազգային-կրօնական գործերը, ուսումնասիրեց թաղական ուսումնարանների վիճակն ու ծրագիրները։ Եւ ուշադրութեան արժանի է, որ նա, պարզելով այդպէս բաց-յանդիման իր դրօշը, երբէք ոչ մի առիթ չը տուեց իր հակառակորդներին իրան անարդար ու պարտազանց անուանելու։ Երբէք նա չը դիպաւ ոչ նրանց անհատական և ոչ ազգային-քաղաքացիական իրաւունքներին։ Եւ երբէք չը դիմեց նա մի մաղաչափ ճնշման՝ այդ թունդ ընտրողական պայքարներում...

Այդպէս բարձր էր պահում նա կուսակցական դրօշը, նա, որը կարող էր իր հարուստ ու կորովի խելքով և իր դրօշակակիցների թարմ-կուսական ոյժերով շատ ու շատ բաներ անել...

—

Սրբազան Ալէքթճեանի միւս գործերից ես կը յիշեմ այստեղ գոնէ մի երկուսը։

Նախ, քաղաքը մտած օրից, նա անագին աղմուկ հանեց իր քարոզներում առաջնորդարանի վերին աստիճանի անյարմար, գծուծ ու կեղտոտ շինութեան մասին։ Նա ազդու կերպով պահանջեց, որ ձեռք զարկվի, մինչև նորի կառուցանելը, գոնէ նրա վերանորոգութեան։ Նրա բողոքը իսկոյն լսվեց և հանգանակելով մի պատկառելի գումար, նա այնպիսի մի հոյակապ տեսք տուեց այդ խարխուլ ու անճոռնի շինութեան, որի նմանը երբէք վանեցին տեսած չէր *)։

Երկրորդ, մեծ եռանդով նստիրվեց Վարագի վանքի շինութիւնների լրացման ու վերանորոգութեան։

Պէտք է ասած, որ այդ վանքը, Պօղոս պատրիարքի կոնդակով, մշտապէս յանձնված է Խրիմեան հայրիկի վանահայրութեան։ Եւ հայրիկը, ինչպէս յայտնի է, պահել է ու փայփայել այդ վանքը իր աչքի լոյսի պէս։ Եւ ահա սա, քաջ ճանաչելով Գրիգորիս եպիսկոպոսի այլայլութիւնը, իր աքսորավայրից, խնդրում է նրան ստանձնել նաև Վարագի կառավարչութիւնը ու գործել անպայման լիազօրութեամբ։ Սրբազանը դարձեալ հրաւիրում է իր ազդու քարոզներով վանեցիների ուշադրութիւնը դէպի վանքի պայծառութեան ու վերաշինութեան գործը։ Թափվում են իսկոյն առատ նուէրներ և սրբազան Ալէքթճեան ձեռնարկում է վանքի նոր ուսումնարանի շինութեան։ Դրա պատերը բարձրացել էին արդէն մինչև կէսը, երբ ես Վանից հեռացայ։ Սրբազանը միաժամանակ զբաղված էր նաև վանքի միւս շինութիւնների վերանորոգութեամբ և, առհասարակ, այդ մենաստանի բարեկարգութեամբ։

Նա հմուտ է հայերէն ու տաճկերէն լեզուների, գիտէ, կարծեմ, նաև ֆրանսերէն։ Ոչ միայն իր քարոզների, այլ և մասնաւոր խօսակցութեան մէջ նա թողնում է վերին աստիճանի ազդու տպաւորութիւն լսողների վրա։ Նա խօսում է պարզ,

*) Ուշադրութեան արժանի է, որ նոյն ձեռով սկսեց Թիֆլիսում իր առաջնորդական գործունէութիւնը նաև սրբազան Արիստակէս Սեդրակեան։ Ցաւում եմ, որ ես մինչև հիմա չը կարողացայ տպագրութեան յանձնել իմ կազմած՝ ընդարձակ կենսագրութիւնը Արիստակէս սրբազանի։

նրանք անում են նրա համար, որ իրանց ասած խմբագիրը այդ է ուզում: Իսկ կուրօրէն կատարում են խմբագրի կամքը նրա համար, որ խմբագիրը իրանց գրածը զետեղէ իր թերթի մէջ:

Գրականական այդ գեադանները (мальчики) ուրեմն գրում են իրանց գրածը (ինչ որ էլ նա լինի) տպված տեսնելու նպատակով, որ յետոյ իրանց ասած լրագրի համարը ծոցներում պահեն, սրան-նրան ցոյց տան իրանց գրածը: Այդպիսի գրողները, ի հարկէ, զուրկ են մի որ և է ուղղութիւնից. նրանք չը գիտեն ինչ բան է համոզմունք, հասարակական շահեր, հասարակական կարծիք և այլն: Դրանք մարդիկ են, որոնք բացի լրագիրներից ոչինչ չեն տեսնում ու կարդում: Եւ ահա լրագիրներից անկապ ֆրազներ սերտելով թուղթ են մրոտում և ուղարկում իրանց ասած խմբագրին: Այդ խմբագիրն էլ վերցնում տպագրում է նրանց գրածը, որովհետև սիրում է շատ աշխատակիցներ ունենալ:

Եւ այդպիսի խմբագրութիւնն ու թերթը, ի հարկէ, արխիվի են նման, որտեղ ինչ ուզում ես ուղարկիր՝ կընդունեն և կը տպեն: Զուր չեն ասում թէ «ուղարկիր ուրիշ թերթին, «Մշակում» չեն տպի, իսկ այնտեղ անպատճառ կը տպագրեն»:

Այստեղից արդէն յայտնի է, որ այդպիսի խմբագիրներ իրանք էլ են ձեռք դցել գրականութիւնը, որովհետև իրանց վարմունքով նպատակում են գրականութիւն ցեխոտողների բազմանալուն:

Գրականութիւն ցեխոտողները խառնվելով վերջին ընտրութիւնների հարցերի մէջ, զզուանք են պատճառում ընթերցողներին: Ցեխնում էք մէկը գրել է իր ասած խմբագրին. «ամբողջ ազգը ուզում է տեսնել կաթողիկոսական գահի վրա տաճկաստանցի եպիսկոպոսներից որ և է մէկին»: Միւսը գրում է. «Արծրունին ՁԼասակար է ազգի համար», երրորդը գրում է. «ամբողջ ազգը ուրախ է, որ Արծրունին չէ ընտրվել». չորրորդը խորհուրդ է տալիս Արծրունուն հրապարակօրէն ճառ չը խօսել, որովհետև նա ընդունակ չէ այդ բանում, և այլ այսպիսի յիմարութիւններ:

Եւ այդ գրում են այնպիսի անձնաւորութիւններ, որոնք մի փոքր ի շատէ զարգացած մարդու կօշիկներին արժանի չեն մօտենալու:

Ի՞նչ անուանել այն խմբագիրներին, որոնք իրանց թերթի էջերում զետեղում են գրականութիւն ցեխոտողների յիմարութիւնները: Պարոններ, գաղտարի համար էք գործում, թէ անձնական շահերի: Ձեր նպատակն է միայն գցել հասարակութեան առաջ Արծրունու պատիւը. այդ ձեզ չի աջողվի պ.պ. խմբագիրներ և թուղթ մրոտողներ. այդպիսով դուք միայն գրականութիւնն էք ցեխոտում:

Եւ այդ գրողներին ես նմանեցնում եմ քոթոթներին, որոնք խմբագիրների հրամանով սկսում են սրա նրա վրա հաջել...

Պարոններ մրոտողներ, զբաղվեցէք ձեր գործով. ինչ ձեր բանն է գրականութիւնը: Մեք համարձակվի, իսկի իրաւունք էլ չունէք այդպիսի ուղեղով ոտք դնել գրականական ասպարիզում: Հասարակութիւնը և գրականութիւնը ձեռք էք գցել, ինչ է:

Դուք միայն գրականութիւն մրոտողներ, ցեխոտողներ էք:

Ազ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մարտի 20-ին

Երէկ, ամսիս 20-ին, հայոց դերասանական խումբը, ի նպաստ պ. Պետրոսեանի, խաղաց «Օտելլո» ողբերգութիւնը:

Անհամբերութեամբ սպասում էին շատերը տեսնել պ. Պետրոսեանին այդ պատասխանատու դերում. տոմսակները վաղօրոք ծախվել վերջացել էին. դատարկ տեղ չէր մնացել. թատրոնը բոլորովին լի էր:

Ժամի 8-ին սկսվեց ներկայացումը. պ. Պետրոսեան հանդէս դալուն պէս ընդունվեց ծափահարութեամբ և արժանացաւ ժապաւէնաղարդ պսակի. արտաքինը և կազմուածքը վատ չեն. շարժուածքը համարձակ է և ազատ: Կանգնած է անհանգիստ կերպով ասեանի առաջ. խօսում է. անտեղի շեշտերը ականջ են ծակում. խօսելիս յաճախ դէմ է ընկնում, բառերը խառնում է, դերը չը գիտէ.... Զայնի ուժեղութիւնը տատանվում է. տեղ-տեղ, յիրաւի, արտայայտում է ուժգնութիւն, անյողդողդութիւն և արիութիւն, իսկ տեղ-տեղ արհեստականութիւնից կարծես ազատվելով, հայրական մեղմ և համոզեցնելու ձգտող ընտրութիւն է ստանում. խաղը շարունակվում է, գործողութիւնները հետևում են յաջորդաբար. գործին քննողաբար վերաբերվողները սպասած տպաւորութիւնը չեն ստանում. «Թոյլ է», «տպաւորութիւն չէ թողնում», բացականչում է մէկը, «ասելի էլ չէ կարելի սպասել», պատասխանում է երկրորդը.— «Պետրոսեան ողբան հիանալի է հօր դերերում, այնքան թոյլ է Օտելլօի դերում», նկատում է երրորդը.... մի շարք այսպիսի դիտողութիւններ ու դատողութիւններ շարունակվում են: Ողբան էլ ուսումնասիրած լինի իր այդ դերը, ողբան էլ ջանում, ձգտում լինի լաւ «ընդօրինակող» լինել, այնու ամենայնիւ նա ասելի բնական և հարազատ հայր է, քան Օտելլօ.... վկայում էին այսպէս մի խումբ քննադատներ:

Ընդհանուրը մի կողմ թողնելով, պիտի խոստովանել և այն, որ պ. Պետրոսեան տեղ տեղ վատ չէր, իսկապէս Օտելլօի նախանձն ու քէնն էր արտայայտում, թէև զգալ չէր տալիս, շօշափելի չէր կացուցանում ներքին այն մրցումը, որ կրծում էր Օտելլօի սիրտը միմեանց փոխարինաբար յաջորդող անկեղծ սիրուց ու նախանձից: Բացի պսակից, պ. Պետրոսեանց ստացաւ նաև մի քանի ընծաներ՝ խաղարկութեան տոմսակ, Շեքսպիրի ամբողջ հեղինակութիւնը, բաժակակալ, ծխատուփ և կարծեմ դրամական ծրար:

Տիկին Սիրանուշ, ինչպէս միշտ, այս անգամ ևս հիանալի էր. նրա անկեղծ սէրը դէպի մարը, միամտութիւնը և անմեղութիւնն այնքան պարզ, այնքան զգալի շօշափելի էր, որ աւելին չէինք կարող սպասել ու ցանկանալ. կարծես յարդելի տիկինը ևս դերը լաւ չը գիտէր. աչքի էր ընկնում գոնէ:

Վերջին գործողութեան մէջ նենջարանի պարագաները այնքան անյարմար և անշուք էին պատրաստված, որ միանգամայն «էֆեկտ» չունեցաւ. Դեզդեմոնան տեսանելի չէր ինչպէս պահված ժամանակը, այնպէս էլ սպանութեան միջոցին...

Պ. Աբրահամեան... Եագօ. թերևս լաւ լինի ապագայում. շարժուածքները վատ չէին:

Տիկին Զաբէլ Եագօի կնոջ դերում «բաբաթ» էր. տիկինը աւելի երգում է, քան խօսում... Նոյն Զաբէլը, ինչ որ եղել է տարիներ առաջ:

Առաջիկայ կիրակի պիտի խաղան «Ռուզան». տոմսակների կէսը նոյն իսկ երեկոյեան վաճառվեց, երը յայտարարվեց. անսպասելի կերպով աջող է գնում մուտքի կողմից. ապահովաբար թալանում են տոմսակները ահագին իրարանցումով. թատրոն յաճախելը պահանջ է դարձել միտեսակ. ցանկանում ենք աւելի ևս աջողութիւն և յարատևութիւն:

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բագու, մարտի 22-ին

Մենք ներքոյ ստորագրեալներս խոնարհաբար խնդրում ենք տեղ տալ ձեր լրագրի էջերում հետևեալ տողերին:

Մենք, բագուցիներս, ամենայն ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ հետևելով գլխաւորապէս Թիֆլիսում կատարվող այժմեան ընտրողական ընթացքին, մեր պարտականութիւն ենք համարում յայտնել ձեզ մեր ջերմ համակրութիւնը և անկեղծ շնորհակալութիւնը այն միակ շիտակ, ուղղամիտ, ճշմարիտ և աջնիւ ուղղութեան համար, որը ընտրութիւնների սկզբից մինչև այժմ բռնել է «Մշակ» լրագիրը, և որը միայն վայել է ամեն մի օրինաւոր կուլտուրական օրգանին, որը ճշմարտութեամբ է առաջնորդվում:

Եթէ մինչև անգամ թեմական պատգամաւորի վերընտրութիւն էլ չը լինի, կամ թէ այդ վերընտրութեան ժամանակ դուք, պ. Արծրունի, չընտրվեք էլ թեմական պատգամաւոր, այնու ամենայնիւ մեր խորին համոզմունքով այս գործում բարոյական յաղթութիւնը ձերն է, որովհետև ինչպէս վերև ասեցինք, մեր այժմեան հայ հրապարակագրողներից դուք, և միմիայն դուք ընթանում էք օրինաւոր ճանապարհով և թոյլ չէք տալիս մի փոխ-նահանգապետութիւն (մութէսարիֆլըղ), իսկ բուն նահանգապետը (վալի-փաշան) նստում է Բաղէշ քաղաքում և շատ քիչ է այցելում մէկցիներին: Մշի ահագին դաշտի բաղդը կախված է լինում, այդպիսով, մութէսարիֆ փաշայի (և ոչ թէ վալի փաշայի) անձնական յատկութիւններից: Եւ ահա, երբ մի որ և է մութէսարիֆ անընդունակ է լինում գրաւական լինել տեղացիների պատւի, գոյքի ու կեանքի ապահովութեան,— սրբազան Ալէքսէեան ստի է կանգնեցնում նրա դէմ նոյն իսկ՝ իրան յարգող՝ թիւրք մեծաւորներին: Նա հանրագրութիւններ է պատրաստել տալիս նրանց ձեռքով թիւրք ամբոխի մէջ և ինքնակար փաշային պաշտօնանկ անում...

Քանի քանի այդ տեսակ փաշաներ այդպիսով դուրվել են նրա հոգոյ ձեռքից:

Ամփոփելով մեր զանազան տպաւորութիւնները, մենք տեսնում ենք, որ Գրիգորիս եպիսկոպոս Ալէքսէեան ներկայանում է մեզ, իր գործունէութեան զանազան շրջաններում, բոլորովին տարբեր գոյների տակ:

Կ. Պոլսում նա մի ուսումնական, ազատամիտ ու կրակոտ խմբագիր է: Մուշում—մի «իգիթ» և թոյլերի պաշտպան: Վանում—մի օրինապահ առաջնորդ և խաղաղ լուսաւորութեան երկրպագու:

Ժողովուրդը սիրում է նրան...

Տ. Փիրումեանց

ձեզ կարճատև էֆէկտների համար կամ լոկ գործնական նպատակին հասնելու համար՝ մի վայրկեան անդամ չեղվել ձեր միանգամ բռնած շիտակ ընթացքից, ուր մնաց դաւաճանել ձեր դրօշակին:

Աստուածատուր Կաճկաճեան, Ներսէս Աբէլեան, լիաժ. տեին., բժ. Միքայէլ Զալեանց, Աղէքսանդր Աբէլեան, Ա. Քալանթար, Միհրան Տէր-Գրիգորեան, Ներսէս Դաւթեան, Սողոմոն Մ.-Շահնազարեան, Խ. Կարա-Մուրզա, Ս. Մուրայայլեան, Մ. Մանուչարեան, բժ. Գ. Խաչատրեան, Հ. Գիւլմուսերեան, Արսէն Կրասիլնիկեան, Անուշ. Քալանթար, Բաղրատ Շիսեան, Գրիգոր Քալանթարեան, Կոստանդին Կրասիլնիկեան, Յակոբ Խօջամիրեան, Աւետիս Դաւթեան, Ենովք Տէր-Պողոսեան, Սամուէլ Թարազտարեան, Գարասիմ Լալայեան, Գալուստ Մախմուրեան, Գրիգոր Ահարոնեան, Զհ. Ա. Զախմախստեան, Յարութիւն Տէր-Յակոբեան, Նէկողայոս Գասպարեան, Յակոբ Աղախանեան, Գաբրիէլ Պապանց (ուսուցիչ), Ադամ Շլթեան, Յովհաննէս Համբարձումեան, Գրիգոն Մարգանեան, լիաժ. Յարութիւն Ադամեան, Վարդան Թումանեան, Գրիգոր Տէր-Գրիգորեան, Սողոմոն Վըրթանէսեան, Մէլիք-Դադայեան, Մ. Ալիբէգեան (լիաժեներ տեին.), Գասպար Տէր-Մարգարեան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունվարի 6-ի աղետից զնասածների օգտին հետևեալ անձինք ուղարկել են մեզ հետևեալ գումարները. Աղէքսանդրօպոլից՝ Պետրոս Բէբուրեան (հայ-կաթոլիկ), Սարգիս Խաղբաշեան, Հաջի-բաբ Խալիրեան և Ստեփան Տէր-Ստեփանեան միասին 4 բուբլի, Մոսկվայից՝ մի խումբ աշակերտներից 22 բուբլի: Ընդամենը 26 բուբլի: Իսկ նախկին 1336 ր. 88 կ. գումարի հետ ունենք այժմ 1362 բուբլի 88 կոպէկ:

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ փոխ-գնդապետ Պիրաղովին, որին օֆիցէր Նեկրասովին սպանելու համար Թիֆլիսի զինուորական դատարանը աքսորի էր դատապարտել Իրկուտսկ նահանգը, այժմ բարձրագոյն իշխանութեան հրամանով պատիժը մեղմացրած է: Նա դատապարտված է չորս ամսվայ կալանաւորութեան, առանց զրկվելու որ և է իրաւունքներից:

—

Ռուս թերթերը հաղորդում են, որ մարտի 21-ին Թիֆլիսցիներին ծանօթ դերմանացի դերձակ պ. Կրէյսման վերջ է տուել իր կեանքին անձնասպանութիւն գործելով ռեվոլվերի հարուածով: Նա թողել է մի նամակ, որի մէջ ասված է թէ 46 տարի աշխատելուց յետոյ, նա նիւթական միջոցներ չունի իր ծերութիւնն ապահովացնելու համար:

—

Երեքշաբթի օր, մարտի 24-ին, յանձնեցինք Թիֆլիսի քաղաքապետ իշխան Արղութեանին 1300 բուբլի, որ հաւաքվել էր «Մշակի» խմբա-

---

եռանդուն, կորով ու համոզված: Նա շատ բան է հասկացնում մանաւանդ իր վերին աստիճանի աչքոյժ ու խրոխտ աչքերով: Ուրիշին լսելիս նա միշտ այնպիսի հայեացք է շինում, որի մէջ պարզ կարդում էք թէ «այդ բոլորը ինձ վաղուց յայտնի է, մի ուրիշն ասա»:

Առհասարակ նա պահում է իրան վերին աստիճանի ազատ, ինքնավստահ, խրոխտ: Եւ այդ դրութեան մէջ նա աւելի նման է մի լեռնական երկրի հզօր իշխանին, քան թէ մի հայ եպիսկոպոսին, այն էլ տաճկաստանցի եպիսկոպոսին:

Նա կը լինի ոչ աւելի քան յիսուն տարեկան:

—

Այժմ դառնանք Ալէքսէեան սրբազանի գործունէութեանը Մշի կողմերում:

Վան եկած ծանօթ մէկցիներից ես հաւաքեցի զանազան տեղեկութիւններ իրանց նախորդ առաջնորդի վրա: Եւ ես չը գիտէի հիանալ թէ ապշեմ նրանց պատմածների վրա:

Երևակայեցէք այսպիսի բաներ:

Մի պատշգամբից մի տաճիկ օնբաշի (տասնապետ—զինուոր), չիմանալով թէ ինչպիսի և ինչ հոգևորականի հետ ունի գործ, կոտրում է ընկոյզը, հանում միջուկը և ներքևով անցնող եպիսկոպոսի գլխին դիտմամբ գցում այդ ընկոյզի կճեպը...

Եպիսկոպոսը ոլորում է նրա կողմը իր առիւծի աչքերը ու ներքև գալ հրամայում: Օնբաշին չէ հնազանդվում: Եպիսկոպոսը հրամայում է իր զափթիներին բարձրանալ վերև ու բռնի բերել

ցած: Հրամանը կատարվում է: Մեր վիթխարի առաջնորդը բռնում է նրան իր երկաթի ձեռքերով, մի լաւ ջարդում, հասկացնելով նրա չափը: Ապա նա հրամայում է կապել ու տանել նրան մութէսարիֆ փաշայի մօտ ու յանձնել նրա դատաստանին: Թշուառական օնբաշին ընկնում է նրա ոտները, համբուրում, աղաչում, պաղատում, բայց իզուր. առաջնորդը անողոք է, նրա խօսքը—խօսք է: Օնբաշին յանձնվում է փաշային և, նրանից էլ նոր ծեծ ուտելով, մի տարով բանտարկվում...

Առաջնորդն այցելում է մօտակայ գիւղերից մէկը: Նրան յայտնում են, որ տեղական քահանան հիւանդ պառկած է: Ի՞նչ է պատահել: Երէկ միւս օրը չորս քիւրդ յարձակվել են նրա վրա, խլել ջէբի մի մէջիդը և մի լաւ ծեծել: Նա մտնում է խսկոյն քահանայի տունը, հարց ու փորձ անում և իմանում քրդերի որտեղից լինելը: Զափթիանները բերում, ներկայացնում են իսկոյն կողոպտող քիւրդերին: Եպիսկոպոսը մէկ մէկ բռնում է նրանց օձիքից, ապտակում և այնպէս սպառնում, որ նրանք էլ այդպիսի «զալթ» չէին անի: Ապա նա նոյն կարգով հրամայում է, որ կապեն նրանց և տանեն բանտը, որպէս զի յետոյ սկսի նրանց դէմ իր «օրինաւոր դատը» նահանգական ատեանում: Նոյն աղաչանքը, պաղատանքը, ոտներն ընկնելը, բայց դարձեալ իզուր. սրբազանի խօսքը—խօսք է: Պատժված քիւրդերը բանտից ուղարկում են նրա մօտ միջնորդ մէջտեղի եռելից, և թախանձում, որ հաշտութիւն կապէ: Նրանք համաձայն են ամեն տեսակ պայմանի, միայն թէ հաշտութիւն կապէ: Վերջապէս, երկար հալ ու մաշ անելուց յետոյ, վրիժառու եպիսկոպոսը նրանց յայտնում է, որ պէտք է մարդագլուխ տաս տաս ոսկի (մօտ 100 բուբլի) տան յոգուտ ծեծված քահանայի: Նեղն ընկած քիւրդերը ուրախութեամբ ընդունում են այդ պայմանը և այդպիսով ազատվում բանտից....

Եւ այդպիսի դէպքեր, ուր նա պաշտպանում է կողոպտված և անարգված հայի բռնաբարված կնոջ և անպաշտպան թոյլերի իրաւունքները— հաչում են Մշի ընդարձակ դաշտում ոչ թէ տատնեակներով, այլ հարիւրներով:

Սրբազան Ալէքսէեանի անվեհեր սիրտը և պաշտելի շիտակութիւնը ահագին ազդեցութիւն են արել վայրենաբարոյ քրդերի ու տաճիկների վրա: Նրանք ոչ միայն վախենում են նրանից, այլ և ակնածում ու յարգում այդ սրտոտ տղամարդին: Նրանք կատարելապէս խոնարհվում են այդ քաջ հովուի առաջ: Այդպէս է արևելքը: Եւ այդպէս է մանաւանդ այն երկիրը, որը բնակեցրած է քրդերով ու տաճիկներով, որոնց առաջին և գլխաւոր օրէնքը այժն է....

Թէ այդ աներկիւղ ոգով և թէ իր բնական, խորիմաստ խելքով նա մեծ հեղինակութիւն ունի նաև թիւրք աղաների ու էֆէնդիների վրա: Եւ այդ է պատճառը, որ նա շատ օգտակար գործեր է կատարում մահմեդական ժողովրդի այդ առաջաւոր մարդկանց օգնութեամբ: Պէտք է ասած, որ Մշի նահանգը վարչական կողմից կազմում է մի փոխ-նահանգապետութիւն (մութէսարիֆլըղ), իսկ բուն նահանգապետը (վալի-փաշան) նստում է Բաղէշ քաղաքում և շատ քիչ է այցելում մէկցիներին: Մշի ահագին դաշտի բաղդը կախված է լինում, այդպիսով, մութէսարիֆ փաշայի (և ոչ թէ վալի փաշայի) անձնական յատկութիւններից: Եւ ահա, երբ մի որ և է մութէսարիֆ անընդունակ է լինում գրաւական լինել տեղացիների պատւի, գոյքի ու կեանքի ապահովութեան,— սրբազան Ալէքսէեան ստի է կանգնեցնում նրա դէմ նոյն իսկ՝ իրան յարգող՝ թիւրք մեծաւորներին: Նա հանրագրութիւններ է պատրաստել տալիս նրանց ձեռքով թիւրք ամբոխի մէջ և ինքնակար փաշային պաշտօնանկ անում...

Քանի քանի այդ տեսակ փաշաներ այդպիսով զլրվել են նրա հոգոյ ձեռքից:

Ամփոփելով մեր զանազան տպաւորութիւնները, մենք տեսնում ենք, որ Գրիգորիս եպիսկոպոս Ալէքսէեան ներկայանում է մեզ, իր գործունէութեան զանազան շրջաններում, բոլորովին տարբեր գոյների տակ:

Կ. Պոլսում նա մի ուսումնական, ազատամիտ ու կրակոտ խմբագիր է: Մուշում—մի «իգիթ» և թոյլերի պաշտպան: Վանում—մի օրինապահ առաջնորդ և խաղաղ լուսաւորութեան երկրպագու:

Ժողովուրդը սիրում է նրան...

Տ. Փիրումեանց

գրութեան մէջ յունվարի 6-ի աղետից վնասածների օգտին: Ուրեմն մեր խմբագրութեան մէջ նոյն նպատակով հանգանակած փողերից մնացել է այժմ ընդամենը 62 ռուբլի 88 կոպէկ: Այդպիսով մենք մինչև այսօր հասցրինք քաղաքային վարչութեանը այդ նպատակով ընդամենը 3800 ռուբլի:

—

Ցանկնալիք թիֆլիսի քաղաքագլխին և բարեգործական վիճակախաղութեան տոմսերի այն բոլոր կուպոնները, որ այլ և այլ նուիրատուներն ընծայեցին յունվարի 6-ի աղետից վնասածների օգտին:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Պ. Ծատուրեան, որը այս օրերս իր ունեցած նաւթային ընդարդակ ձեռնարկութիւնը ծախեց թիֆլիսի վաճառական պ. Ա. Մանթաշեանին, օրերումս մեկնաւ պ. Մ. Շահգելդանեանի նոյնանման ձեռնարկութեան հետ:»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Մեր եկեղեցու ծխականները վճռել են խնդրամատոյց լինել թէ մեր առաջնորդին և թէ ս. սինոդին՝ թոյլ տալու պ. Կարա-Մուրզայի երգեցիկ խմբին պատարագի ժամանակ եկեղեցում երգելու: Ծխականները վճռել են 600 ռուբլի տարեկան նշանակել որպէս վարձ երգեցիկ խմբին:»

—

Մեր երգիչ Շահլամեանի մասին մեզ գրում են Խալիայից հետևեալը. «Արդէն յայտնի է ձեր լրագրի ընթերցողներին, որ պ. Ն. Շահլամեան երեք տարուց ի վեր գտնվում է Խալիայի Նապոլի քաղաքում, իր հաւաստի տէնօր ձայնը կատարելագործելու նպատակով: Եւ ահա նա արդէն աջողութեամբ մշակեց իր տաղանդը, ուժեղ ձայնը և այժմ ուղևորվելու է Պետերբուրգ, որտեղ սլիտի երգէ օպէրայում: Շահլամեան դիտաւորութիւն ունի շուտով այցելել և Կովկաս: Ցոյս ունենանք որ մեր հայ հասարակութիւնը կը հետաքրքրվի երգչի ձայնով: Եւ իրաւ, արժէ լսել պ. Շահլամեանին: Այստեղ, Խալիայում, զանազան իմպրէսարիօներ ջանք էին անում որսալ երգչին և նրա հետ պայմանագիրներ կապել, սակայն բարեբաղդաբար նրանց այդ դիտաւորութիւնը չաջողվեց:»

—

Ստացանք «Սասունցի Օհան» անունով մի փոքրիկ գրքոյկ, որի նիւթը վերցրած է թիւրքահայերի կեանքից, աշխատութիւն Վ. Փափազեանի: Տպագրված է Մոսկվայում և արժէ 5 կոպէկ:

—

Անցեալ անգամ մոռացանք յիշատակել մի բան, որ տեղի ունեցաւ մարտի 22-ին, թատերասէրների ժողովում. նախ քան պարապմունքներին դիմելը, նախագահն առաջարկեց յարգել այս օրերս Կ. Պոլսում վախճանված թատերագիր Սրապիոն Հէքիմեանի յիշատակը ոտի կանգնելով, որը և կատարվեց: Ապա ժողովը վճռեց ուղարկել Հէքիմեանի քրոջը մի ցաւակցական հեռագիր:

—

Մեզ տեղեկացնում են Կ. Պոլսից, որ «Հայրենիք» լրագրի խափանման գործում խառն է Աշըղեան պատրիարքի մատը: Այդ լրագիրը, մանաւանդ կաթողիկոսական հարցում, խիստ հակառակ էր այժմեան պատրիարքին:

—

Ապրիլ ամսից, այսինքն 9 ամսով «Մշակին» բաժանորդ գրվողները պէտք է վճարեն 8 ռուբլի:

—

Ստացանք «Հրատարակչական ընկերութեան» հրատարակած երկու գիրք. 1) «Յարութիւն Արարատեանի կեանքը» թարգմանեց ռուսերէնից Պ. Պ. և 2) «Ընտանեքի յոյսը» Անենսկայի վէպիկը, թարգմանութիւն օր. Տէր-Յովսէփեանի: Առաջին գիրքը արժէ 75 կոպէկ, երկրորդը՝ 10 կոպէկ:

—

Տեղական լրագիրները հաղորդում են, որ մարտի 25-ին կայացաւ թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ՝ քաղաքային սանիտարական յանձնաժողովի արտակարգ նիստը, քննելու համար այն միջոցները, որոնք պիտի ձեռք առնվեն թիֆլիսում տարածված դիֆտերիտ վարակիչ հիւանդութեան դէմ մաքառելու համար: Նիստին կը նախագահէ քաղաքագլուխ իշխ. Արգուտինսկի և կը մասնակցեն՝ նահանգական բժիշկ Զէլինսկի, քաղաքային սանիտարական բժիշկները և քաղաքային վարչութեան ամբողջ կազմակերպութիւնը:

—

Մեզ խնդրում են տպագրել հետևեալ արդարացի նկատողութիւնը. «Ցանկալի է և շատ ցանկալի, որ հայոց թատրոնական անցեալ սեզոնի կոմիտեատը չուշացով ամենամանրամասն կերպով հրատարակութեան տար իր հաշիւը: Հարկաւոր է առաջն առնել այն անհաստատ լուրերին, որոնք տարածվում են ժողովրդի մէջ: Մարտի 22-ի թատրոնական ժողովում, անդամներից մէկը յայտնեց, թէ ինքը գիտէ և կապացուցանէ, որ հաշուի մէջ տրված գումարը ճիշդ չէ, որ իսկապէս այնքան գումար չէ հանգանակած, ինչ որ տպված է, և այնքան գումար չէ վճարած, ինչքան որ ցոյց է տուած հաշուում: Այդ խօսքերը ծանր տպաւորութիւն գործեցին: Յաւելով պիտի նկատել, որ կոմիտեի անդամները իսկոյն չը հերքեցին այդ ծանր մեղադրանքը, և թոյլ տուին, որ ինքը ժողովը փակի այդ վիրաւորական խօսակցութիւնը: Այժմ այդ խօսակցութիւնները տարածվել են հասարակութեան մէջ, և ցանկալի է, որ կոմիտեատը վերջ տար դրան, ներկայացնելով հաշիւ՝ հարկաւոր դոկումենտներով: Դա վերջ կը տար անախորժ զրոյցներին և բացի այդ, շատ լաւ կը լիներ առհասարակ ապագայ թատրոնական գործի համար: Ինչք կարող չը նկատել, որ նոյնպէս զանազան անախորժ խօսակցութիւններ է յարուցել և այն 170 ռուբլու խնդիրը, որ կոմիտէատը ուղարկել է Կ. Պոլիս՝ իր գործակալին, դերասանուհի հրաւիրելու համար: Այդ գործակալը, որի անունը, ինչպէս ասում են, Թ.—եան է, մինչև այժմ էլ այդ 170 ռուբլին չէ վերադարձրել, թէև դերասանուհին չէ եկել: Գործակալը գրել է, որ 70 ռուբլին ծախսել է անցագրի և այլ բաների վրա (անցագիրը թիւրքիայում մի քանի մէջիդիէ արժէ), իսկ 100 ռուբլին էլ մինչև այժմ իր մօտ է: Այդպիսով գործակալի այդ անվայել վարմունքը պէտք է տուժի կոմիտէատը՝ ինքն վճարելով 100 ռուբլին: Միթէ հասարակական փողեր ուտող պօլսեցին ուրիշ փող չը գտաւ Կ. Պոլսում, որ իրան թոյլ է տալիս այսպէս վարվելու թիֆլիսի թատրոնի՝ կոպէկ-կոպէկ հաւաքած փողերի հետ»:

—

Յունվարի 6-ի աղետից վնասվածների օգտին ԲԱԹՈՒՄԻՑ պ. Միքայէլ Մեբուրնութեանցի միջնորդութեամբ ստացանք 47 ռուբլի 20 կոպէկ, որ նուիրել են հետևեալ անձինք. Մ. Մեբուրնութեանց, Ս. Ղամբարեանց, Մ. Մաթէոսեան, Վ. Զաւարեան. Ա. Մելիքեան, Ի. Միրմանեան, Մ. Թումանեան, Կ. Փաչոնեան, Խ. Մելքումեան, Յ. Այվազեան, Ս. Առաքելեան, Յ. Յովհաննէսեան, Ս. Խօջայեան, Ա. Խաչատրեան, Ա. Յարութիւնեան, Աբրահամ, Ա. Զաքոյեան, Ի. Առաքելեան, Ս. Գալստեան, Ս. Եղիազարեան, Գ. Յարութիւնեան, Ս. Ղարիբեան, Մ. Շաքոյեան, Կ. Գրիգորեան, Գ. Մարգարեան, Ա. Ստեփանեան, Մ. Համբարձումեան, Մ. Մովսէսեան, Ի. Մկրտչեան, Մ. Յարութիւնեան, Վ. Ծատուրեան, Մ. Յովսէփեան, Օ. Սիմէօնեան, Յ. Խաչատրեան, Կ. Ասիլեան, Գ. Եղիազարեան, Յ. Վարդանեան, Խ. Մարգարեան, Ս. Յարութիւնեան, Ն. Փիրումեան, Ա. Առաքելեան, Մ. Ագիցկերեան, Ն. Գրիգորեան, Յ. Մարութեան, Մ. Ղամբարեան, Կուզմա, Պեսոբը, Բերուրիչվիլի, Մարդարիչվիլի, Աբէլ, Հասան, Կիզկին: Նախկին 62 ռ. 88 կոպ. գումարի հետ ունենք այժմ 110 ռուբլի 8 կոպէկ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

—

Ռուսաստանի սովեալների թշուառութիւնը արձագանք գտաւ նոյն իսկ ովկիանոսի այն կողմերում....

Նոր աշխարհի նոր որդիքը, որոնց սիրտը չէ ծածկվել թիւր ազգասիրութեան և նեղ կրօնամօլութեան ժանգով, որոնք կրթված և ոգևորված են մարդասիրական լայն գաղափարներով, և գիտեն սիրել և օգնել մարդուն, առանց ազգութեան և կրօնի խտրութեան,—անտարբեր չը մնացին դէպի քաղցածը, դէպի սովամահը....

Ռուս աղքատ, քաղցած, սովատանջ, յուսահատ գիւղացու թշուառութիւնը աւելի արձագանք գտաւ հեռու ամերիկացու սրտում, քան մօտիկ անգլիացու, գերմանացու, ֆրանսիացու սրտում: Նոր աշխարհի մարդասէր ուղղութեան վրա չը կարողացաւ ազդել ոչ դիպլօմատական խորամանկութիւնը, ոչ «քաղաքական հայեցակէտը», և ոչ կաբինետների մութ անկիւններում հնարած «պօլիտիկան»: Այդ բոլորի փոխարէն հանդէս եկաւ անաղարտ, մաքուր մարդասիրութիւնը, որը և դրդեց նոր աշխարհի որդոց՝ փող հանգանակել, ցորեն գնել, ալիւր հաւաքել և ուղարկել սովատանջ ռուսին....

Դա պատմական մի մեծ քայլ է, դա մի անմոռանալի ապտակ է, որ Ամերիկան տուեց դիպլօմատ Եւրոպային....

Քաղցածին հաց պէտք է տալ և ծարաւին ջուր, ահա այն սուրբ զգացմունքը, որի առաջ պէտք է խորտակվեն «պօլիտիկան» և դիպլօմատիական բոլոր խորամանկութիւնները, թիւրաազգասիրութեան և նեղ կրօնամօլութեան հետ միասին:

Քաղցած մարդուն պէտք է հաց տալ, ծարաւին ջուր.—այդ տարրական ճշմարտութիւնը Եւրոպան սովորեցրեց ամերիկացիներին, բայց ինքը սովորեցնողը մոռացաւ այդ ճշմարտութիւնը:

Այժմ ուսուցիչը պէտք է նորից սովորի իր աշակերտից: Թող կարմրի և սովորի....

*

ԹԻՒՐՔԻԱ

—

«Кавказъ» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է հետևեալը. «Բօլգարական գործակալ Վուլկովիչի սպանողը դեռ չէ գտնված: Մինչև որ բօլգարական կառավարութիւնը զանազան սխալ ենթադրութիւններ անելով, կամենում էր այդ սպանութիւնը քաղաքական խնդիրների հետևանք համարել, թիւրքաց ոստիկանութեան մինիստր Նաղիմբէյ իր ուշադրութիւնը դարձրեց մի այլ հանգամանքի վրա: Սոֆիայի փողոցում ապրում են երկու հայուհիներ, մայր և աղջիկ. վերջինը, ասում են, գեղեցկուհի է: Այդ տիկինները մեծ աջողութիւն ունէին: Աղջկայ սիրեկանների թւում կային երկու բարձրաստիճան թիւրքեր, մէկը փաշայ և միւսը բէյ: Այդ աղջիկը մինչև անգամ փեսայացու էլ ունէր, մի հայ: Սակայն Վուլկովիչ իր փողի ներգործութեամբ կարողացաւ դուրս անել աղջկայ անից թէ այդ թիւրքերին և թէ փեսայացուին:

«Փաստերի բոլորովին ուրիշ շրջանին պէտք է վերագրել անգլիական յայտնի թղթակից Ֆիցջերալդի՝ Սերբիա և Բօլգարիա գնալը: Ֆիցջերալդ դիտաւորութիւն ունի մանրամասն ուսումնասիրել այդ երկիրները, որպէս զի իր տպաւորութիւնները՝ քաղաքական դրութեան մասին կարողանայ նկարագրել «Daily News» լրագրում: Ֆիցջերալդ այժմ Բէլգրադում է գտնվում, ապա կերթայ Սոֆիա: Նրան յանձնարարված է իր նամակներով հող պատրաստել՝ իշխանութիւնը Գլադստոնի ձեռքն անցնելու ժամանակին, որովհետև Սալսբրիի մինիստրութեան անկումը, ըստ երևոյթին, անպատճառ տեղի է ունենալու եկող տարի, և ազատամիտները, որոնք կարծում են թէ Գլադստոնի պրէմիէրութիւնը, նկատի ունենալով նրա տարիքը, վերջինն է լինելու, կամենում են նրա համար մի փառաւոր յաղթանակ պատրաստել, որը կը լինի մի տեսակ ապոթէոզ նրա քաղաքականութեան:»

ՊՕՍՏԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆ

—

Երբ 1874 թվին Շվեյցարիայի Բերն քաղաքում հիմնվեց միջազգային պօստային դաշնադրութիւնը, նա ամփոփում էր ընդամենը 40 միլիոն քառակուսի վերստ տարածութիւն ունեցող երկիրներ, որոնց ազգաբնակութեան թիւը 350 միլիոն հոգի էր: Այժմ, երբ կը վաւերացվի նոր դաշնադրութիւնը, նա իր մէջ կամփոփի 96 միլիոն քառակուսի վերստ տարածութիւն ունեցող երկիրներ, 946 միլիոն բնակիչներով: Վիլհելմայի պօստային կոնգրէսը ունէր 130 երկիրների ներկայացուցիչներ:

Միաք կայ պօստային դաշնադրութեան մէջ մտած բոլոր երկիրներում ընդունել ընդհանուր կամ միանման պօստային մարկներ. սակայն այդ մտադրութեան իրագործումը կախված է միջազգային համանման դրամի ընդունելուց:

Այս բօպէիս միջազգային պօստային դաշնադրութիւնն ունի 17,000 պօստային գրասենեակներ, որոնց մէջ ծառայողների թիւը հասնում է 700,000 հոգու: Ամեն օր ուղարկվող ծրարների թիւը հասնում է 41 միլիոնի, իսկ մի տարվայ ընթացքում՝ 15 միլիարդի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պարիզից հեռագրում են, մարտի 23-ից. «Այստեղ հրաւէր եղաւ ֆրանսիացի բանուորներին, որ նրանք մայիսի 1-ին հեռու պահեն իրանց անկարգութիւններից, և պահանջեն՝ նախ օրվայ մէջ նշանակել 8 ժամ աշխատանքի համար և երկրորդ՝ պահպանել միջազգային խաղաղութիւնը:»

—Պարիզի ազգաբնակութիւնը սարսափի մէջ է: Լրագիրները խորհուրդ են տալիս հսկող մասնաժողովներ կազմել ինքնապաշտպանութեան համար: Քիմիկոսները ասում են, որ պայթիւնները կատարվում են դինամիտի և մելինիտի միջոցով:

—«Times» լրագրի թղթակցի տեղեկութիւններին համեմատ, Պարիզում ապրող օտարականների երրորդ մասը պատրաստվում է հեռանալ այդտեղից, դինամիտային պայթիւնների պատճառով:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մարտի: «Journal de St.-Petersbourg» հաղորդում է, որ մինիստր Գիրսի առողջութիւնը դգալի կերպով լաւացել է:—Երէկ այստեղ բացվեց ռուս թռչնապահների ժողով, հաւաքված են 40 մարդիկ:

ԼԻԲԱՎԱ, 23 մարտի: Հիւսիսային ամերիկական «Միսսուրի» նաւը, որը Նիւ-Եօրկից ալիւր է տանում յօգուտ Ռուսաստանի սովեալների, հասաւ այստեղ և հանդիսաւոր ընդունելութիւն գտաւ:

ՊԱՐԻԶ, 23 մարտի: Դահոմէյցիները պատերազմական գործողութիւններ սկսեցին ֆրանսիացիների դէմ, պահանջելով որ նրանք յետ քաշվեն Դահոմէյի ամբողջ ցամաքից:

ՍՏԱՖՖՕՐԴ, 23 մարտի: Անարխիստների վերաբերութեամբ Ուօլսալում հետևեալ վճիռն է կայացրած. երեք հոգի դատապարտված են 10 տարով ուղղիչ տան մէջ կալանաւորված մնալուն. մէկը, որը խոստովանեց իր յանցանքը, նոյն կալանաւորութեան 5 տարով, մնացած երկուսը արդարացրած են:

ԲԵՐՆ, 23 մարտի: Գրէյֆենսեան լճում, Ցիւրիխի մօտ, ընկղմվեց մի նաւ. ընկղմվելու պատճառն այն էր, որ նաւը լցված էր. 40 ճանապարհորդներից 4-ը խեղդվեցան. մնացեալները փրկված են:

ՊԱՐԻԶ, 23 մարտի: Երէկ երեկոյեան պօլիցիան ձերբակալեց մի աղամարդ, որը հագել էր կնոջ շոր, և որը իր ձեռքով նման էր անարխիստ Մատիէին, որը Բավաշօլի գլխաւոր ընկերն է:

ՊԱՐԻԶ, 23 մարտի: Անարխիստ Մատիէի ձերբակալման լուրը ճիշդ չը դուրս եկաւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մարտի: Հրատարակված է պետական խորհրդի որոշումը՝ ազատ հողերի վրա մասնաւոր լեռնային արդիւնահանութեան վերաբերեալ կանոնների փոփոխութեան և լրացնելու մասին:—Լրագիրները հաղորդում են, որ երկաթուղիների վարչութիւնը և դէպարտամէնտը, որոնք միացվեցան 1891 թվի վերջում, վճռված է կրկին մի ինքնուրոյն հիմնարկութիւն դարձնել: Գեներալ Պետրով վարչութեան նախագահ է մնում:—Երէկ 5 ժամվայ վերջում, օխտէնսեան վառօդային գործարանում 350 պուդ պիրօքսիլինի պայթիւն տեղի ունեցաւ. չինութիւնը հիմքի հետ միասին օդը թռան, այնպէս որ չինութեան և բանուորների հետքն անգամ չը մնաց. հարիւր և աւելի սաժէն տարածութեան վրա գտնվել են մարմինների բոլորովին այլանդակված մասեր: Ցընցումից վնասվեցան հարևան գործարանական չինութիւններից մի քանիսը, մի և նոյն ժամանակ հինգ բանուորներ աւել կամ պակաս ծանր վէրքեր են ստացել: Պայթիւնի պատճառը յայտնի չէ: Հարուածը այնքան զօրեղ է, որ երկու վերստ տարածութեան վրա մի քանի տներում ճեղքվեցան պատերը և պատուհանների ապակիները կոտրվեցան:

ՄԱԴՐԻԴ, 24 մարտի: Երէկ երեկոյեան փորձ եղաւ օդը թռցնել սպանիական պատգամաւորների ժողովը: Երկու անարխիստներ՝ ֆրանսիացի Դէվակ և պորտուգալացի Ֆերէյրա բռնվեցան այն բօպէին, երբ պայթող ռումբերը գնում էին նախագահի սենեակից նիստի դահլիճը տանող սանդուղքի վրա: Փորձ անող յանցաւորները զօրեղ դիմադրութիւն ցոյց տուին. նրանց հարցափորձի ենթարկեց ներքին գործերի մինիստրը: Ազգաբնակութիւնը պահանջում է խստագոյն պատժել յանցաւորներին:

ԲԱՐՑԵԼՕՆԱ, 24 մարտի: Ֆրանսիացի 14 անարխիստներ կալանաւորված են և կաքսորվեն:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 24-ին

Լօնդօնի վրա	10 ֆունտ արժէ. .	97 ռ.	90 կ.
Բերլինի վրա	100 մարկ — . .	47 ռ.	90 »
Պարիզի վրա	100 ֆրանկ — . .	38 »	90 »
Ոսկի	— — արժէ . .	7 »	81 »
Մաքսային կուպօններ	— . .	156 »	— »
Արծաթ	— — — . .	1 »	12 »
Բօրսային դիսկօնտներ	— . .	— »	— »
Պետ. բանկի 5% տոմս	1 շրջանի . .	102 »	75 »
— — — —	2-րդ —. .	102 »	25 »

— — — — 3-րդ —	—	» —	»
— — — — 4-րդ —	—	» —	»
— — — — 5-րդ —	—	» —	»
— — — — 6-րդ —	102	» 25	»
6% ոսկեայ ընկնում	155	» —	»
4% ոսկեայ փոխառութիւն	—	» —	»
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	» —	»
— — — 2-րդ —	101	» 75	»
— — — 3-րդ —	102	» 75	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	237	» 25	»
— — երկրորդ —	219	» 25	»
Պետական երկաթուղային ընկնում.	104	» 50	»
5½ ընկնում	—	» —	»
4% ներքին փոխառութեան	94	» 75	»
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101	» 50	»
Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. — —	199	» —	»
5½% վկայակ. գիւղ. հող. բանկի	104	» 50	»
4½% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մնալ.	148	» 25	»
— — — թղթադ.	101	» 50	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները	101	» 50	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101	» 25	»
Օդեսայի — —	101	» 75	»
Թիֆլիսի — —	—	» —	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	—	» —	»
— — Քութայիսի —	—	» —	»

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է:

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և առամնայաւի) սիֆիլիսի և աչքացաւի
Դ. Գ. ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Մ. Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ—12—12½ ժ. կանանց ց. և մանկաբարձութեան:
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12½—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Բ. ԱԼԵԿՍԷՅԵՎ—5—6 ժ. նեարդային ց. և էլեկտրաբուժութեան:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և ներքին ց.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
Վճար—50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) համար առանձին:
14—52 (հ) 90—№ 79 Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԵՐ.

1) *Հանդերձների և սպիտակեղէնի ձևի դասեր Գլօդզինսկու մեթոդով և Շեդզէրի ֆրանսիական մեթոդով:*
2) *Կարի դասեր մօդային ժուրնալներով:*
3) *Հարթակարի և զանազան ձեռագործերի դասեր:*
4) *Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար:*

Վճարը ամսական 2 բուբլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկոյեան:

Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը բի: (№ 23) 13—40

ՆՈՐՈՒԹԻՒՆ Վ. ԳՐԻՎՆԱԿԻ դեղագործական մագազինում

ՍՏԱՑՎԱԾ ԵՆ *քիմիական* ՆԵՐԿԵՐ *զատկի ձուերը ներկելու համար,* ՄԵՏԱԼԱԿԱՆ *կապսիւլներում, նոյնպէս և ուրիշ տեսակ ամենաանվնաս* ՆԵՐԿԵՐ, *որոնք ներկում են հաւասար և գեղեցիկ գոյներով, առանց ձեռքերը կեղտոտելու: Տրվում են հրահանգներ: կան մագազինում զատկի* ԽՄՈՐԵՂԷՆՆԵՐԻ *համար* ՎԱՐԴԻ *և* ԼԻՄՕՆԻ *իւղեր,* ՎԱՆԻԼ, ՇԱՖՐԱՆ, ԿԱՐԴԱՄՕՆ (*դարիչին*) *և այլ անհրաժեշտ նիւթեր:*

Մագազինում ծախվում է սեփական լաբօրատորիայում պատրաստած ՕԴԿՕԼՕՆ:
(№ 34.) 2—10

Միայն ֆաբրիկային այդ մարկա կրելով, վաւեր է համարվում.

ՄԻ՞ ՀԱԶԻՐ

Մեղրից և խոտերից պատրաստված մալց-էկստրակտ և կոնֆետներ

Լ. Գ. ՊԵՏՇ ԵՒ ԸՆԿ. ԲՐԷՍԼԱՈՒԻ ՄԷՋ:

Քիմիական վերլուծութեամբ և բժշկական փորձերով ապացուցված է, որ այդ պրէպարատները չեն պարունակում առողջութեան համար որ և է վնասակար բաղադրութիւններ, և այդ պատճառով նրանց ներմուծումը Ռուսաստան և նրանց այդտեղ ծախելը թոյլատրված է:

ԳԻՆԸ. *չիրը* 1 *ր.* 25 *կ. և* 2 *ր.* 40 *կ. կոնֆետները* 30—50 *կոպ.:*

Գլխաւոր պահեստ Ռուսաստանում
Վ. ԱՈՒՐԻԽԻ *մօտ*
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, Կոլոկոլնայա 18/19

Վաճառվում է Ռուսաստանի բոլոր դեղագործարաններում և դեղատներում:

(91—№ 127) 9—16 (*ամսի* 10 *և* 25)

ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ „ԷԼԵԿՏՐԱ"

(*Թիֆլիսում, Վօրոնցօվի արձանի դիմաց, Մակկէրի դեղատան վերնայարկում*).
Ընդունվում են ամեն տեսակ լուսանկարչական պատուէրներ, մատչելի գներով: Պատուէրները կատարվում են մաքուր և խնամքով: Նկարչական գործերը կատարում է նկարիչ Պօղոս Տէր-Աստուրեան: № 20

6—10 (*ամսի* 25) (№ 140)

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹԷՅԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏՆԵՐԻ
Կ. ԵՒ Ս. ՊՕՊՕՎ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

БРАТЬЯ К. и С. ПОПОВЫ

Վարչութիւնը Մոսկվայում, Կուզնեցկի Մոստ փողոցում, տուն Տրետեակով եղբայրների.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՓԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱ. Կուզնեցկի Մոստ, տուն Տրետիակով եղբայրների.
« Սորասնոյ վանքի մօտ, տ. Դուբրովինի.
« Կալուժսկայա Վօրոտա, տ. Գայդինի.
« Կրասնիեա Վօրոտա, տ. Գոլիկովի.
« Տագանսկի հրապարակի և Սիմոնովսկի փողոցի անկիւնում, տ. Կոսիչկինի.
« Իլինսկիա Վօրոտա, Լիբիանսկո-Իլինսկի առևտրական հաստատութեան մէջ, № 32.
« Միասնիցկի Վօրոտա, տ. Ֆիրսանովի.
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Նեվսկի պրոսպէկտ, Կազանեան մայր-եկեղեցու դիմաց, տ. Գանսէնի.
ՎԱՐՇԱՎԱ. Սենատորսկայա փողոց, տ. № 461.
« Նովի-Սվէտ փողոցում, տ. կօմս Ստարիցկու, № 1252.
ՎՕՐՕՆԵԺ, Բոլշայա Դվորյանսկայա փողոց, տ. Սամօֆալովի.
ԿԻԵՎ. Ալէքսանդրովսկայա փողոց, տ. Լիչկովի.
« Կրեշչատիկա, տուն, Կիրդէյմի.
ԱՍՏՐԱԽԱՆ. Եկատերինեան (Մոսկովեան) փողոց, հայոց Աղաբաբեան դպրոցի հոգաբարձական խորհրդի տուն.
ԲԱԳՈՒ. Դուբէրնատորսկայա և Ցիցիանովսկայա փողոցների անկիւն, տուն Մէլիքովի.
ՎԻԼՆՕ. Մեծ փողոց, Թատրոնի դիմաց, տուն Պուպկէնայի.
ԴԻՆԱԲՈՒՐԳ, Պետերբուրգեան, փողոց, տուն Լեվիտի.
ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎԼ, Նովո-Գոստինսկի փողոց, տուն Զիզիտի, խանութ № 2.
ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ. Կրասնայա փողոց, տուն Կոնանենկո.
ԵԼԵՑ. Տօրգովայա փողոց, տուն Նաղարովի.
ԿԱԶԱՆ, Վօսկրէսենսկայա փողոց, Բարկինայի տանը.
ԿԱՄԵՆԵՑ-ՊՕԴՕԼՍԿ. Առևտրական հրապարակ, քաղաքային վարչութեան տունը.
ԿԻՇԻՆԵՎ. Գոստինսկայա և Գուբէրնսկայա փողոցի մէջ անկիւն. տուն Շվարցի.
ԿՕՎՆԱ. Պետերբուրգեան փողոց, տ. Պոխարկովի.
ԿՈՒՐՍԿ, Մոսկովսկայա փողոց, տ. Գլազկովայի.
ԼՕԴԶԻ. Պետրովսկայա փողոց, տուն Կոնչատոտի, № 783.
ՄԻՆՍԿ. Գուբէրնատորսկայա փողոցի և Սօբորնայա հրապարակի անկիւն, տուն Պօլիակի.
ՄՕԳԻԼԵՎ (Նախ.). Բոլշայա Սադովայա և Պոչտովայա փողոցների անկիւն, տուն Լեվինի.
ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՕԴ, Մեծ Պետրովկա, տուն Մակէեվի.
« Նիժնի բազար, տ. Բլենովի.
ՆԻԿՕԼԱԵՎ. Սօբորնայա փողոց, տ. Միլոնենկո.
ՕԴԷՍԱ. Դէրիբասովսկայա փողոց, տ. Զէրէպենիկովայի.
ՕՐԵՈԼ. Բոլիսովսկայա փողոց, տուն Զօրինայի.
ՊԵՆԶԱ. Մոսկովսկայա փողոց, տուն Շիչկոի.
ՊՍԿՕՎ. Սերգիեվսկայա փողոց, տուն Գերասիմովի.
ՐԻԳԱ. Խվէստկովայա փողոց, տուն № 6.
ՐԻԱԶԱՆ, Պոչտովայա փողոց, տուն Շուլգինի.
ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա). Մեծ Սադովայա, տուն Մորդովցովի.
ՐԻԲԻՆՍԿ. Կրեստովայա փողոց, տուն Զիմինի.
ՐԵՎԵԼ. Գլինիանայա փողոց, տուն Դեմինի.
ՍԱՄԱՐԱ. Դվորեանսկայա փողոց, տուն Շիրաեվայի.
ՍԱՐԱՏՕՎ. Նիկոլաևսկայա փողոց, տուն բուղդարանների եկեղեցական ընկերութեան.
ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, Նախիմովսկի պրոսպէկտ, տ. Մաղուրովի.
ՍԻՄՖԵՐՕՊՕԼ, Պոլիցէյսկայա փողոց, տուն Պապէ.
ՍՄՈԼԵՆՍԿ. Բլագովէշչենսկայա փողոց, տուն Պավլովի.
ՏՎԵՐ. Միլլիոննայա փողոց, տ. Սվէտոգորովի.
ԹԻՖԼԻՍ, Գոլովինսկի պրոսպէկտ, տուն Միրմանովի.
ՏԱՄԲՕՎ. Նոսովսկայա փողոց, տուն Գրիգորիևայի.
ՏՈՒԼԱ, Կիևսկայա և Բելևմենսկայա փողոցների անկիւն, տուն Շչէրբաչեվայի.
ԽԱՐԿՕՎ. Պետրովսկայա փող., սեփական տուն.
ԵԱՐՕՍԼԱՎԼ. Գոստինսկի դվոր, առաջին կօրպուս, №№ 11 և 12.

Վարչութեան և սեփական խանութների հեռագրական հասցէն է՝ „Попоовъ"

ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏ

Սև թէյ	№ 0,	ֆունտը 4 ր.	— կ.
» »	№ 1,	» 3 »	— »
» »	№ 2,	» 2 »	80 »
» »	№ 3,	» 2 »	60 »
» »	№ 4,	» 2 »	30 »
Ութերորդ մասը		18 կոպէկ՝ փաթեթին	
» »		25 » »	
» »		30 » »	

Սև թէյ	№ 5,	ֆունտը 2 ր.	10 կ.
» »	№ 6,	» 1 »	90 »
» »	№ 7,	» 1 »	70 »
» »	№ 8,	» 1 »	50 »
» »	№ 9,	» 1 »	40 »
Փաթեթ 3 մսխալանոց			5 »
» 3 »			10 »

Ընկերութեան թէյերը ծախվում են մաս մաս՝ ֆունտ, կէս ֆունտ, քառորդ ֆունտ, ութերորդ ֆունտ, գլխաւոր պահեստում, Մոսկվա, Ալէքսէեվսկի փողոց, Ալէքսէեվսկի վանքի մօտ, սեփական տան, որտեղ և կպցնվում են կառավարչական բանդերօլները, որոնց բացակայութիւնը ապացոյց է, թէ փաթեթը կեղծ է, որի վրա խնդրում ենք մեր թէյը գործածողներին ուշք դարձնել:

ՎԱՃԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Թէյը պօստով ուղարկելը եւրօպական Ռուսաստանում՝ ընկերութեան սեփական խանութները իրանց հաշվին են վերցնում և ոչինչ գիջումն չէ լինում: Տրանսպորտով ուղարկելիս, երբ պակաս չէ 50 ֆունտից կամ 100 բուբլու արժէքից, առնվում է 14% գիջումն. իսկ ուղարկելու միւս բոլոր ծախսերը՝ դրվում է գնողի վրա: Երբ թէյ են ուզում ստանալ «նալօժնիյ պլատեժով», պէտք է ուղարկել իբրև գրաւական՝ ոչ պակաս քան ամբողջ պատուէրի արժէքի 15%-ը (թէյը ուղարկվում է բացառապէս «Բօսսիյսկի Օբշչեստվօի» և «Նադէժդա» ընկերութիւնների միջոցով). իսկ տրանսպորտային գրասենեակների և երկաթուղիների գործակալների ստացականները, իբրև ապացոյց, որ ապրանքի նալօժնի պլատեժը վճարած է, պէտք է անյապաղ ուղարկվեն այն խանութը, որտեղից ուղարկված է ապրանքը:

(№ 27) 3—5

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Марта 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.